



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 17 » 04 2019թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 20

Ձեռնարկողը՝

«ՄԵԳԱՇԻՆ» ՍՊԸ

ք. Երևան, Վշտունու 3-րդ նրբանցք, փուն 3/1

Գործունեությունը՝

Ջրվեժի բազալտների հանքավայրում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեքվություն
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 20

<17> 04 2019թ.

**Ջրվեժի բազալտների հանքավայրում օգտակար հանածոյի
արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն**

Ձեռնարկող՝	«ՄԵԳԱՇԻՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Ա կատեգորիա/ ք. Երևան
Տեղադրման վայրը՝	

Ջրվեժի բազալտների հանքավայրը գտնվում է Նոր Նորք վարչական շրջանի հարավ-արևելյան ծայրամասի արդյունաբերական գոտում, բնակելի կառուցապատված տարածքից մոտ 280 մ հեռավորության վրա, իսկ Ջրվեժ գյուղի ծայրամասային բնակելի տնից 700մ հեռավորության վրա: Հանքավայրը գտնվում է բարենպաստ ճանապարհատրանսպորտային պայմաններում, մոտակա բնակավայրերի հետ կապված է ասֆալտապատ ճանապարհներով: Հանքավայրի տարածքը հանդիսանում է տնտեսապես յուրացված շրջան, կատարվել են տարբեր ընդերքագործման աշխատանքներ, առկա են ենթակառուցվածքներ (ճանապարհներ, էլեկտրահաղորդման գծեր և այլն):

«ՄԵԳԱՇԻՆ» ՍՊԸ կողմից նախագծված բացահանքը ներկայումս անօգտագործելի, մասնակիորեն խախտված, ոչ խորը ձորերով կտրտված բլրային տարածք է, որի լանջերը մասամբ լցված են բազալտի քարերով: Այն բնութագրվում է քարքարոտ, ծառաթփուտային բուսականությունից զուրկ տարածքով, զբաղեցնում է 1.41 հա մակերեսով տարածք: Հանքավայրում բերվածքային ապարների միջին հզորությունները կազմում են 2.79մ, իսկ օգտակար հաստվածքի միջին հզորությունը՝ 25.6մ:

Դիտարկվող տարածքում բացակայում են գեոդինամիկ (փլուզումային, սողանքային և այլն) երևույթները, մակերևութային, կամ ստորգետնյա ջրային հոսքերը: Ստորգետնյա ջրերի բացակայությունը պայմանավորված է ապարների ֆիզիկամեխանիկական հատկություններով:

Ջրվեժի բազալտների հանքավայրի պաշարները՝ 9781 հազ.մ³ քանակությամբ հաստատվել են ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր երկրաբանության և ընդերքի պահպանության վարչության ՊՏՀ 10.07.1966թ.-ի N 147 որոշմամբ, ըստ՝ A+B+C₁ կարգերի: Բլոկների ելքը լեռնային զանգվածից կազմել է 34.68%: Հանքավայրի բազալտներն իրենց որակական ցուցանիշներով համապատասխանում են ГОСТ 4001-58 և ՀՍ 100-65 տեխնիկական պահանջներին և պիտանի են որպես շինքար և հատքար օգտագործելու համար: Ուսումնասիրվել է նաև արդյունահանվող զանգվածից խճի



ստացման հնարավորությունը /արտադրական թափոնները կազմում են մոտ 60%-ը/, այդ նպատակով բացահանքի հարևանությամբ 0.5կմ հեռավորության վրա տեղադրվող արտադրական հրապարակում նախատեսված է արտադրական թափոնների մշակում:

Նախապատրաստական փուլում լեռնակապիտալ աշխատանքների տևողությունը կկազմի 0.5 տարի: Բացահանքում լեռնային աշխատանքների կազմակերպման համար, հարավ-արևելյան ուղղությամբ, բնակելի տարածքից մոտ 270 մ հեռավորության վրա նախատեսված է արտադրական հրապարակ՝ իր անհրաժեշտ ենթակառուցվածքներով, այդ թվում՝ վազոն-գրասենյակ, հանդերձարան, ջրի և վառելիքի տարողություններ, կեղտաջրերի հեռացման հոր և ջարդիչ-տեսակավորող կայանք:

Ջրվեժի բազալտների հանքավայրի լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները բարենպաստ են՝ բաց լեռնային աշխատանքներով, առանց պայթեցման աշխատանքների արդյունահանման համար:

Ընկերության կողմից նախագծված բացահանքը բնութագրվում է հետևյալ պարամետրերով՝

- Առավելագույն երկարություն՝ 197.0մ;
- Առավելագույն լայնություն՝ 163.0մ;
- Բացահանքի համար օտարվող մակերես՝ 1.41հա;
- Բազալտների հաշվեկշռային պաշարի ծավալ՝ 555917.0մ³;
- Բազալտների արդյունահանվող պաշարի ծավալ՝ 474325.0մ³;
- Հանքաստիճանի բարձրություն՝ 5.0մ;
- Մարվող հանքաստիճանի թեքման անկյուն՝ 75°;
- Անվտանգության բերմայի լայնություն՝ 1.5մ;
- Մակաբացման ապարների ծավալ՝ 53898.0 մ³

Մակաբացման միջին գործակիցը կազմում է 0.114մ³/մ³:

Տարեկան արտադրողականությունն ըստ բազալտի մարվող զանգվածի հաշվարկվել է՝ 25270.0մ³: Բացահանքի ծառայման ժամկետն ընդունվել է 22 տարի:

Հանքարդյունահանման աշխատանքները նախատեսված է կատարել միակողմանի ընդլայնական ընթացքաշերտերով մշակման համակարգով՝ մակաբացման ապարներն արտաքին լցակույտ տեղափոխելով: Բլոկերի արդյունահանման աշխատանքների համար ընդունված է հորատասեպային եղանակ: Ենթաստիճանների մշակումը նախատեսված է կատարել վերնից-ներքև հաջորդաբար՝ 2.5մ միջին բարձրությամբ:

Բացահանքի լցակույտային մակաբացման ապարները ներկայացված են՝ 46484.0մ³ ծավալով արտադրական թափոններով, 53898.0մ³ ծավալով մակաբացման ապարներով՝ /որից 3810.0մ³ հողաբուսական շերտ, իսկ 50088.0մ³ ժամանակակից այլովիալ-դեյուովիալ նստվածքներ՝ փուշտա/: Արտադրական թափոնների հիմնական մասը նախատեսված է օգտագործել խճի արտադրության համար: Մնացած մակաբացման ապարները բուլդոզեր-փխրեցուցիչով տեղափոխվելու են բացահանքի արևելյան հատվածում ձևավորվող արտաքին լցակույտում: Բուսահողային շերտը և փուշտան կույտավորվելու են առանձին-առանձին, հետագայում ռեկուլտիվացման աշխատանքների համար օգտագործելու նպատակով: Արտաքին լցակույտի զբաղեցրած տարածքը հիմքի մասում կկազմի 0.7հա, միջին բարձրությունը՝ 15մ, իսկ հողային շերտի լցակույտի զբաղեցրած տարածքը՝ 300մ²:

Շահագործման 21-րդ տարուց սկսած շահագործման աշխատանքներին զուգահեռ, լցակույտային ապարները տեղափոխվելու են բացահանքի մշակված տարածքներ՝ դեպի 1305.0մ հորիզոն, բացահանքի ռեկուլտիվացման համար: Ռեկուլտիվացիայի համար բացահանքի հատակում սկզբում փովում են հողմնահարված բազալտները, այլովիալ-դեյուովիալ առաջացումները, ապա դրանց վրա հողային շերտը: Բացահանքում



նեկուլտիվացիայի ենթակա տարածքի ընդհանուր մակերեսը, ներառյալ՝ աշխատանքային հրապարակ և այլ խախտված տեղամասեր, կկազմի՝ 11700մ²:

Շահագործվող բացահանքի համար անհրաժեշտ ջրի քանակությունը տեխնիկական /հարթակների ջրցան, հորատասեպային աշխատանքներ և այլն/ և խմելու նպատակներով, նախատեսված է բերվել ջրատար մեքենաներով: Խմելու ջուրը ընկերության կողմից նախատեսված է բերել Երևան քաղաքի ջրամատակարարման ցանցից և պահել հատուկ տարողություններում: Աշխատողների կենցաղային կարիքների համար նախատեսվում է տեղադրել անթափանց պատերով կեղտաջրերի հավաքման հոր:

ՇՄԱԳ-ում, ըստ աշխատանքների տեսակների և տեղամասերի /ապարների հանման-բեռնման աշխատանքներ տրանսպորտային միջոցների տեղաշարժ, լցակույտեր, դիզ.վառելիքի այրման արտանետումներ, ջարդիչ/ հաշվարկվել են բացահանքում մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների քանակները: Բոլոր տեսակի աշխատանքներից անօրգանական փոշու քանակը ընդհանուր հաշվարկվել է 7.67տ/տարի (կամ 1.026գ/վրկ): Համակարգչային ծրագրով, անշարժ աղբյուրների համար հաշվարկվել են փոշու արտանետումների ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաները: Համաձայն հաշվարկների արդյունքերի սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված նորմերում, գումարային կոնցենտրացիան, ներառյալ՝ փոշու ֆոնային պարունակության տվյալը, կկազմի 0.24 մգ/մ³:

Լեռնային աշխատանքների հետևանքով խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնման համար անհրաժեշտ ծախսերի խոշորացված նախահաշիվը գնահատվել է 3225.8 հազար դրամ, իսկ կենսաբանական վերականգնմանը՝ /ճնապատված տարածքների հիմնում/ 200000 դրամ/հա:

ՇՄԱԳ հաշվետվությունում գնահատվել է հանքարդյունահանման աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունները /հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն, սոցիալական միջավայր/ և ներկայացվել են բոլոր նշված ազդեցությունների կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ: Գնահատվել է նաև աղմուկի ազդեցությունը: Բնապահպանական միջոցառումների ցանկում ներկայացվել են նաև միջոցառումներ, ուղղված՝ աղմուկի և թրթռման նվազեցմանը, աշխատողների առողջությանը, թափոնների կառավարմանը, բուսատեսակների և կեղանիների պահպանությանը և արտակարգ իրավիճակների արձագանքմանը: Որպես բնապահպանական միջոցառում ՇՄԱԳ-ում նախատեսվել է կառուցապատված տարածքների ուղղությամբ պաշտպանիչ շերտով ծառատունկ: ՇՄԱԳ-ում բնապահպանական միջոցառումների համար նախատեսվել են ծախսեր:

Մշակվել է նաև բնապահպանական կառավարման պլան /որում ներառվել են նախապատրաստական և փակման փուլերի, ինչպես նաև ընդերքօգտագործման աշխատանքների համար նախատեսված մեղմացնող միջոցառումները/ և շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների նկատմամբ մշտադիտարկումների գործողությունների պլան, ներառյալ սոցիալականը:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ պահանջներով: Փորձաքննական գործընթացում ՇՄԱԳ հաշվետվությունը Օրենքի պահանջներով ուղարկվել է լրամշակման և լրակազմման:



«Օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքում Ջրվեժի բազալտների հանքավայրում օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացներում իրականացվել են հանրային քննարկումներ /չորս քննարկում/: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են «Քաղաքաշինության կոմիտեն, առողջապահության, արտակարգ իրավիճակների նախարարությունները և բնապահպանության նախարարության ստորաբաժանումները, որոնց կողմից ներկայացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա նախագիծը լրամշակվել է: Նախատեսվող գործունեության վերաբերյալ «Քաղաքաշինության կոմիտեն արտահայտել է իր բացասական դիրքորոշումը, համաձայն որի՝ «Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի Երևանի գլխավոր հատակագծի հաստատման մասին N 2330-Ն որոշմամբ Ջրվեժի բազալտների հանքավայրի համար նախատեսված հողատարածքն ընդգրկված է հասարակական նշանակության կանաչ տարածքների գոտում, ինչպես նաև չի ապահովվում սանիտարապաշտպանիչ գոտին:

Փորձաքննական հիմնավորում

«Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի Երևանի գլխավոր հատակագծի հաստատման մասին N 2330-Ն որոշմամբ՝ Ջրվեժի բազալտների հանքավայրի համար նախատեսված հողատարածքն ընդգրկված է հասարակական նշանակության կանաչ տարածքների գոտում, ինչպես նաև հնարավոր չէ ապահովել սանիտարապաշտպանիչ գոտին, ինչն աննպատակահարմար է դարձնում տարածքում օգտակար հանածոյի արդյունահանումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումը՝ «ՄԵԳԱՇԻՆ» ՍՊԸ կողմից ներկայացված Ջրվեժի բազալտների հանքավայրում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է բացասական եզրակացություն:

Գլխ. մասնագետ



Հ. Մկրտչյան